



Հայաստանի Հանրապետություն
Վանաձոր, Տիգրան Մեծի 59
Tigran Mets, 59, Vanadzor
Republic of Armenia
Tel. (հեռ) (0322) 4 22 68
E-mail hcav@hcav.am
E 2001

ՀԵԼՍԻՆԿՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՍԱՄԲԼԵԱ ՎԱՆԱԶՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ HELSINKI CITIZENS' ASSEMBLY VANADZOR OFFICE

12 հունվարի, 2010 թ.

ՀՀ կենտրոնական ընտրական
հանձնաժողովի նախագահ
Գարեգին Ազարյանին

Դիմում

2010 թվականի հունվարի 10-ին մեր կազմակերպությունը՝ Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակը, դիտորդական առաքելություն է իրականացրել թիվ 10 ընտրատեղամասում մեծամասնական կարգով ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրությունների ժամանակ:

Դիտորդական առաքելության իրականացման ժամանակ մեր կազմակերպության դիտորդները ներկա են գտնվել թվով 20 ընտրական տեղամասերում՝ 10/07, 10/08, 10/09, 10/10, 10/11, 10/12, 10/14, 10/15, 10/16, 10/18, 10/19, 10/22, 10/23, 10/24, 10/25, 10/26, 10/30, 10/31, 10/32, 10/33:

Նշված գրեթե բոլոր ընտրատեղամասերում մեր դիտորդների կողմից արձանագրվել են ՀՀ ընտրական օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնց համար ՀՀ ընտրական օրենսգրքի 135-րդ հոդվածի պետք է սահմանվի վարչական և քրեական պատասխանատվություն՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 40² հոդվածով, ՀՀ քրեական օրենսգրքի 149, 150, 153, 154⁵ հոդվածներով:

Արձանագրված խախտումներ

Հանձնաժողովի աշխատանքներ, կազմակերպվածություն

Թիվ 10/11 ընտրատեղամասում քվերակության սկզբում հանձնաժողովն աշխատում էր «թափթված», անհետևողականորեն, արձանագրված խախտումների կապակցությամբ որևէ միջոցառում չէր ձեռնարկում, այնուհետև՝ ժամը 15:00-ից, աշխատել է նորմալ:

Թիվ 10/24, 10/25, 10/26 ընտրատեղամասերում ևս հանձնաժողովի աշխատանքները գնահատվել են անկազմակերպ:

Թիվ 10/18 ընտրատեղամասում հանձնաժողովի աշխատանքները եղել են շատ անկազմակերպ, նախագահը հաճախակի բացակայել է տարածքից, հանձնաժողովի անդամներից ոմանք էլ խաչքառ լուծելով են զբաղված եղել:

Թիվ 10/08 ընտրատեղամասում հանձնաժողովի ծրարները կնքող անդամի փոխարեն այդ լիազորությունը իրականացրել է հանձնաժողովի նախագահը:

Թիվ 10/08, 10/18 ընտրատեղամասերում հանձնաժողովը բաղկացած է եղել յոթ անձից:

Թիվ 10/12 ընտրատեղամասում հանձնաժողովի երկու անդամները հաճախակի բացակայել են քվեարկության սենյակից:

Թիվ 10/14 ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահը հայտարարել է, որ ինքը որևէ հնարավորություն չունի, նույնիսկ անուժ է կանխել «Ազատ հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից որպես դիտորդ գրանցված Արմեն Սահակյանի գլխավորած խմբի ակնհայտ ագրեսիվ գործողությունները, որոնք խոչընդոտել են ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքները:

Թիվ 10/24 ընտրատեղամասում հանձնաժողովի կողմից «Ազատ հասարակության ինստիտուտի» ներկայացուցչին գրանցել են նախ որպես վստահված անձ, այնուհետև որպես դիտորդ, իսկ քվեաթերթիկների հաշվարկման ժամանակ էլ՝ նորից որպես վստահված անձ:

Թիվ 10/30 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը որևէ կերպ չի արձագանքել և չի վերացրել արձանագրված խախտումները:

Բաց քվեարկություն

Թիվ 10/07, 10/10, 10/15, 10/16, 10/08. 10/19, 10/21, 10/08 դիտորդների կողմից արձանագրվել են բաց քվեարկության դեպքեր:

Թիվ 10/11, 10/25 ընտրատեղամասերում ընտրողները քվեարկելուց հետո քվեաթերթիկը ծրարում տեղավորել են քվեախցիկից դուրս:

Թիվ 10/25 ընտրատեղամասում ընտրողի կողմից նկատվել է նաև բջջային հեռախոսով քվեախցում լուսանկարում, որը զգացվել է բջջային հեռախոսի լուսարձակի ձայնից:

Թիվ 10/18, 10/08 ընտրատեղամասում նկատվել է քվեարկությունից հետո տարբեր ժեստերով հանձնաժողովի տարբեր անդամների քվեարկության արդյունքների մասին տեղեկացնելու միտում:

Ուղղորդումներ և մարդկանց խմբակային տեղափոխում ընտրատեղամաս հատուկ մեքենաներով

Թիվ 10/08 ընտրատեղամասում ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու իրավական կարգավիճակ չունեցող Հարութ անունով մեկն ուղղորդել է ընտրողներին մինչև քվեարկության սենյակ: Այս կապակցությամբ դիտորդները և վստահված անձինք բողոքել են, սակայն հանձնաժողովի նախագահը որևէ միջոցառում չի ձեռնարկել:

Թիվ 10/11, 10/13, 10/14, 10/16 ընտրատեղամասերում հանձնաժողովի անդամների և որոշ վստահված անձանց, «Ազատ հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի կողմից գրանցված դիտորդների կողմից նկատվել են ընտրողների ուղղորդումներ այս կամ այն թեկնածուի օգտին քվեարկելու համար:

Թիվ 10/14, 10/15 ընտրատեղամասերում նկատվել է քարոզչություն Արա Սիմոնյանի օգտին:

Թիվ 10/12 ընտրատեղամասում 12:00-ից մարդիկ խմբերով մեկ համակարգողի ուղեկցությամբ ներս են մտել քվեարկության սենյակ:

Թիվ 10/18 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը հանդիսացել է համայնքապետ, և ընտրողները քվեարկությանը ներկայացել են նրա հրահանգով:

Թիվ 10/19 ընտրատեղամասում Արա Սիմոնյանի վստահված անձը դուրս է եկել ընտրատեղամասից և թևանցուկ ներս բերել քվեարկության եկած քաղաքացիներին:

Թիվ 10/20 ընտրատեղամասում «Ազատ հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի դիտորդը դրսում պայմանավորվել և ընտրատեղամաս է ուղեկցել բազմաթիվ ընտրողների:

Թիվ 10/25 ընտրատեղամասում երեք կանայք ուղեկցել են գրեթե բոլոր ընտրողներին:

Թիվ 10/26, 10/32 ընտրատեղամասերում դրսում անծանոթ մարդիկ մոտեցել են քվեարկության եկող անձանց և փոքր-ինչ զրուցել նրանց հետ:

Թիվ 10/33 ընտրատեղամասում ոմն Հասմիկ Սիմոնյանը քվեարկության հենց սկզբից անընդհատ թե՛ տեղամասի ներսում, թե՛ դրսում զրուցել է քվեարկության եկած և արդեն քվեարկած քաղաքացիների հետ: Երեկոյան ժամը 19:00-ին այդ նույն կինը գրանցվել է որպես Արա Սիմոնյանի վստահված անձ:

Թիվ 10/24 ընտրատեղամասում հանձնաժողովի կողմից որպես դիտորդ գրանցված «Ազատ հասարակության ինստիտուտի» ներկայացուցիչը ընտրողներին տեղամաս է բերել խմբերով, զանգով հրահանգել գալ, մասնակցել քվեարկությանը:

Թիվ 10/30 ընտրատեղամասում Արա Սիմոնյանի վստահված անձը դիմավորել է ընտրողներին և նրանց ուղեկցել մինչև քվեախցիկ, քվեատուփ: Այնուհետև հեռախոսազանգով հրահանգներ է տվել ընտրողներին գալ քվեարկության:

Թիվ 10/32 ընտրատեղամասում ժամը 10:00-11:00-ն ընկած ժամանակահատվածում ընտրատեղամասի բակում հավաքվել են 5-6 տղամարդ, որոնք քվեարկության են բերել մոտ 30 մարդու, այնուհետև իրենք նույնպես քվեարկել են:

Թիվ 10/14 ընտրատեղամասում 14:30-ից մոտ մեկ ժամվա ընթացքում մարդկանց մեքենաներով տեղափոխել են ընտրատեղամաս, որը կրկնվել է նաև 16:00-ին:

Թիվ 10/25 ընտրողներին ընտրատեղամաս է տեղափոխել 08 86 S սպիտակ գույնի միկրոավտոբուսը, որի վրա փակցված է եղել 27 համարը:

Թիվ 10/31 ընտրատեղամասում ընտրողներին քվեարկության են բերել 30 82L համարանիշով սպիտակ միկրոավտոբուսով, ինչպես նաև մարդատար մեքենաներով:

Թիվ 10/25 ընտրատեղամասում ժամը 17:05-ին Երազ մակնիշի միկրոավտոբուսը տեղամաս է բերել մի խումբ քվեարկողների, սակայն վստահված անձինք և դիտորդները բողոքել են, որից հետո ընտրողները հեռացել են ընտրատեղամասից:

Թիվ 10/15 ընտրատեղամասում 30 83 L դեղին պետհամարանիշով սպիտակ գույնի միկրոավտոբուսը երկու անգամ ընտրողներին տեղափոխել է ընտրատեղամաս:

Թիվ 10/10 ընտրատեղամասում «Ազատ հասարակության ինստիտուտի» դիտորդը և Արա Սիմոնյանի վստահված անձ Յուլյա Սաֆարյանը պարբերաբար նույն մեքենայով ընտրատեղամաս են տեղափոխել ընտրողներին:

Կուտակումներ ընտրատեղամասում

Թիվ 10/25 ընտրատեղամասում 11:00-ից մինչև 18:00-ն նկատվել է կուտակումներ տեղամասում և տեղամասից դուրս:

Թիվ 10/25 ընտրատեղամասում 14:00-ից հետո նկատվել են կուտակումներ:

Թիվ 10/11, 10/31 ընտրատեղամասում պարբերաբար ներկա են եղել տեղամասում ներկա գտնվելու իրավունք չունեցող անձինք:

Թիվ 10/13 ընտրատեղամասում երկու ընտրող հայտնաբերել են, որ իրենց փոխարեն գրանցամատյաններում արդեն ստորագրված է:

Թիվ 10/25 ընտրատեղամասում մի ընտրող հանձնաժողովի նախագահի թույլտվությամբ քվեարկության է մասնակցել անձնագրով, որի սերիան, համարը կտրված է եղել:

Թիվ 10/18 ընտրատեղամասում ընտրատեղամաս է ներկայացել հանձնաժողովի նախագահի ընկերը, որն, ըստ հանձնաժողովի նախագահի, հենց այդ կարգավիճակով էլ է իրավունք ունեցել ներկա գտնվել տեղամասում:

Դիտորդը բողոքել է, և այդ անձը հեռացվել է:

Թիվ 10/18 ընտրատեղամասում միաժամանակ ներկա են գտնվել միևնույն թեկնածուի երկու վստահված անձինք:

Թիվ 10/19 ընտրատեղամասում 16:30-ի սահմաններում անհայտացել են գրանցամատյանները, այնուհետև վերադարձվել ընտրատեղամասի հանձնաժողովի նախագահի կողմից ընտրողների անունների դիմաց ստորագրություններով:

Թիվ 10/11, 10/33 ընտրատեղամասերում քվեախցում հայտնաբերվել է մեկական դատարկ ծրար:

Թիվ 10/12 ընտրատեղամասում նկատվել է լցոնում, այնուհետև նույն անձի կողմից բազմակի քվեարկության դեպքեր:

Թիվ 10/30 ընտրատեղամասում միաժամանակ ներկա են գտնվել նույն թեկնածուի երկու ներկայացուցիչներ:

Թիվ 10/19 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամների կողմից արհեստականորեն լրացվել են ստորագրություններ ընտրողների գրանցամատյանում, որը նկատել են դիտորդներն ու Նիկոլ Փաշինյանի և Դավիթ Յակոբյանի վստահված անձինք: Նրանք բողոքել են, որից հետո հանձնաժողովի նախագահը և Արա Սահակյանի վստահված անձինք աղմուկ են բարձրացրել, հայիոյելով, քաշքշելով, հրելով ու ծեծելով դուրս են հանել բողոք անձանց, այդ թվում նաև որոշ լրագրողների, դադարեցրել ընտրության գործընթացը և փակել ընտրատեղամասը ավելի քան մեկ ժամով: Այդ ընթացքում սեղանից անհայտացել են

գրանցամատյանները, դրանք որոշ ժամանակ անց վերադարձվել են հանձնաժողովի նախագահի կողմից, որոնք նա հանել է իր ծոցից: Հետագայում քվեարկության եկած որոշ քաղաքացիներ բացահայտել են, որ իրենց և իրենց հարազատների անվան դիմաց արդեն ստորագրված է: Նմանատիպ մեկ դեպքի ժամանակ ընտրատեղամասում ներկա է եղել նաև ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Բախչազուլյանը: Այնուհետև, քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ պարզվել է, որ գրանցամատյաններում առկա բազմաթիվ ստորագրություններ նույնն են:

Քվեարկության գործընթացը ընտրատեղամասում դադարեցնելու հետևանքով քաղաքացիները զրկված են եղել քվեարկելու հնարավորությունից: Տասնյակ քաղաքացիներ եկել են քվեարկելու և ստիպված ետ վերադարձել:

Հանձնաժողովի նախագահին ներկայացված բողոքները, չնայած հանձնաժողովի նախագահի խոստմանը, չեն քննարկվել հանձնաժողովի կողմից:

Ճնշումներ, սպառնալիքներ, հարկադրանք և սահմանափակումներ

Թիվ 10/08 ընտրատեղամասում Արա Սիմոնյանի վստահված անձի կողմից սպառնալիքներ են հնչել Նիկոլ Փաշինյանի վստահված անձի, «Հայք» թերթի լրագրողի հասցեին, փորձել է խփել նրանց, բայց դիտորդներից մեկը կանխել է:

Թիվ 10/14 ընտրատեղամասում որպես «Ազատ հասարակության ինստիտուտ» ՀԿ-ի դիտորդ գրանցված Արմեն Սահակյանը ուժի կիրառման, ֆիզիկական բռնության կիրառման սպառնալիքների զուգակցմամբ հայիոյանքներ, վիրավորական արտահայտություններ է հղել «Ժամանակ» օրաթերթի լրագրող Քրիստինե Խանումյանի նկատմամբ այնքան ժամանակ մինչև վերջինս հեռացել է ընտրատեղամասից:

Թիվ 10/12 «Ազատ հասարակության ինստիտուտի» դիտորդ Արա Սահակյանը մոտեցել է դիտորդներին, վստահված անձանց, սպառնացել, թե «վախենում ես քեզ վաղը չգտնե՞մք»: Հետո մոտեցել է Ղավիթ Հակոբյանի վստահված անձին, քաշքշել նրան, այնուհետև դուրս տարել քվեարկության սենյակից, դրսում սպառնացել, քաշքշել:

Թիվ 10/24 լրագրողի նկատմամբ ներկայացվել է անձնագիր ներկայացնելու պահանջ, և մոտ մեկ ժամ լրագրողի աշխատանքը արհեստականորեն խոչընդոտվել է:

Թիվ 10/19 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը «Ազատություն» ռադիոհեռուստատեսության ներկայացուցիչ Անուշ Մարտիրոսյանից պահանջել է ներկայացնել անձնագիր, որպեսզի թույլատրի նրան ներկա գտնվել տեղամասում: Այնուհետև քաշքշոցներով, բռնություններ կիրառելով հեռացրել է ընտրատեղամասից:

Նույն տեղամասում մի քանի րոպե անց Արա Սիմոնյանի վստահված անձը ոտքով հարվածել է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանին, որը հեռացել է ընտրատեղամասից:

Թիվ 10/24 ընտրատեղամասում «Ժամանակ» օրաթերթի լրագրողի նկատմամբ ևս ներկայացվել է անձնագիր ներկայացնելու պահանջ, և մոտ մեկ ժամ խոչընդոտվել է նրա աշխատանքը:

Թիվ 10/24 ընտրատեղամասում հանձնաժողովի անդամները վստահված անձանց, դիտորդների նկատմամբ պրովոկացիաներ են ձեռնարկել և նրանց հետ վիճաբանությունների մեջ մտել՝ ընտրատեղամասից հեռացնելու միտումով:

Թիվ 10/30 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը սպառնացել է դիտորդին հեռացնել ընտրատեղամասից, եթե վերջինս իրեն «խելոք չպահի»:

Դիտորդների, լրատվամիջոցների իրավունքների սահմանափակումներ

Թիվ 10/12 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը, հանձնաժողովի անդամներից մեկը անընդհատ դիտորդի ուշադրությունը փորձել են շեղել խախտումներից, նույնիսկ հնչեցրել «բա քեզ պետք է» արտահայտությունը:

Չտոտ երկու անգամ դիտորդին մոտեցել են «Ազատ հասարակության ինստիտուտի» դիտորդները և սպառնացել, որ եթե իրեն լավ չպահի, նա կփոշմանի, «նրա վերջը վատ կլինի»:

Թիվ 10/18 ընտրատեղամասում առավոտյան դիտորդին չեն թույլատրել ծանոթանալ ընտրական հանձնաժողովի փաստաթղթերի գրառումներին՝ գործավարության մատյան, տեղեկություն ընտրողների թվի, հատկացված քվեաթերթիկների վերաբերյալ: Այս կապակցությամբ գրություն է ուղարկվել ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողով, սակայն հետո էլ ո՛չ դիտորդին, ո՛չ ՁԼՄ ներկայացուցիչներին տեղեկատվություն չի տրվել:

Թիվ 10/19 ընտրատեղամասում հանձնաժողովի նախագահը հնարավորություն չի տվել դիտորդին տեղեկանալ քվեարկությանը մասնակցած անձանց թվի վերաբերյալ:

Թիվ 10/25 ընտրատեղամասում «Հայկական ժամանակ» թերթի լրագրողին հանձնաժողովի նախագահին արգելել է լուսանկարել քվեարկության ընթացքը, ձեռքից խլել է հեռախոսը, նկարները ջնջել և լրագրողին հեռացրել ընտրատեղամասից:

Քվեարկության արդյունքների ամփոփում

Թիվ 10/15 ընտրատեղամասում երեկոյան ժամը 20:00-21:00-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովը մինչև քվեների հաշվարկը սուրճի ընդմիջում է կազմակերպել: Նշված մեկ ժամվա ընթացքում ընտրողների գրանցամատյանները դուրս են հանվել ընտրատեղամասից: Ժամը 21:00-ի սահմաններում ոստիկանության աշխատակիցը կանչել է հանձնաժողովի նախագահին, նախագահը ինչ-որ բան ձեռքին մոտեցել է չզմռսվող

պահարանին և դնել մեջը: Ելունդների թիվը հաշվարկելուց հետո պարզվել է, որ քվեարկել է 582 մարդ, մինչդեռ քվեարկողների թվի ընթացիկ տվյալների գումարը կազմել է 480:

Այնուհետև բացվել է քվեատուփը և սկսվել է քվեների հաշվարկը, որը պարբերաբար ընդհատվել է սուրճի ընդմիջումներով: Ժամը 10:30-ին՝ քվեաթերթիկների հաշվարկման ժամանակ, երբ փակված է եղել ընտրատեղամասի դուռը, տեղամաս մուտք են գործել սկզբուն երկու, այնուհետև չորս անծանոթ անձինք: Այս անձինք տեղամասից դուրս են հրավիրել ներկա գտնվող լրագրողին, որի հետ դուրս է եկել նաև հանձնաժողովի նախագահը՝ քվեաթերթիկների հաշվարկի աշխատանքները հանձնարարելով հանձնաժողովի քարտուղարին: Մի քանի րոպե անց հանձնաժողովի նախագահը վերադարձել է, վերցնել դեռևս վերջնականապես չհաշվարկված Արա Սիմոնյանի քվեաթերթիկները և տեղավորել թղթե պարկում: Այնուհետև բողոքների հետևանքով նույն թղթե պարկը բերել է և դատարկել սեղանին, որի պարունակությունն արդեն զգալիորեն շատացել էր:

Այս փաստի կապակցությամբ որևէ արձանագրություն չի կազմվել:

Երեկոյան ժամը 22:56-ին ԶԲԱ Վանաձորի գրասենյակի կողմից այս փաստի հիման վրա հաղորդում է ներկայացվել Կենտրոն համայնքի ոստիկանություն, ԶԶ կենտրոնական ընտրական հանձնաժողով:

ԶԶ կենտրոնական ընտրական հանձնաժողովից ներկայացուցիչները ժամանել են թիվ 10/15 ընտրատեղամաս: Սակայն որևէ կերպ իրավիճակը չի փոխվել:

ԶԶ ընտրական օրենսգրքի 116-րդ հոդվածի 5-րդ կետի 2-րդ մասի համաձայն՝ պատգամավորի ընտրությունները համարվում է չկայացած, եթե ընտրության նախապատրաստման և անցկացման ընթացքում տեղի են ունեցել այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրության արդյունքի վրա:

Մեր դիտարկումների ընթացքում արձանագրված վերը նշված ընտրախախտումների մասսայականությունը, դրանց բնույթը և մասնավորապես՝ թիվ 10/12, 10/15, 10/19 ընտրատեղամասերում ընտրական գործընթացի աշխատանքների դադարեցման, լրագրողների նկատմամբ ֆիզիկական ուժի կիրառման և քվեարկության արդյունքների ամփոփման ընթացքում քվեարկության արդյունքները կեղծելու վերաբերյալ փաստերի հիման վրա պահանջում ենք.

- 2010 թվականի հունվարի 10-ին թիվ 10 ընտրատարածքում ԱԺ պատգամավորի մեծամասնական կարգով լրացուցիչ ընտրությունները համարել չկայացած
- ԶԶ ոստիկանության աշխատակիցներին, ընտրատեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահներին ու հանձնաժողովի այլ անձանց ընտրատեղամասերում ընտրական խախտումների կանխարգելման գործում դրսևորած անգործության, Արա Սիմոնյանի վստահված անձանց կողմից հանձնաժողովի աշխատանքներին խոչընդոտելու հիմքերով ենթարկել պատասխանատվության ԶԶ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Կից նեկայացնում եմ 2010 թվականի հունվարի 11-ին «Ուրբաթ» ակունքում կայացած մամլո ասուլիսի ժամանակ մեր կազմակերպության կողմից հրապարակված «2010 թվականի հունվարի 10-ին թիվ 10 ընտրատարածքում մեծամասնական կարգով ԱԺ պատգամավորի լրացուցիչ ընտրությունների նախնական արդյունքների մասին» մամլո հազորդագրության պատճենը:

Հարգանքներով՝

կազմակերպության նախագահ

Արթուր Սաքունց